



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ  
ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՈՐՈՇՈՒՄ**

20 հոկտեմբերի 2020թ., ՖՎՈ-001-Լ

**2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ  
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԿՈԼԵԿՏԻՎ ՀԱՆՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 123.1-ի 4-րդ մասով, «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ով՝ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

Հաստատել «Ոչ վարկային թալանին» նախաձեռնության կոլեկտիվ հանրագրի պատասխանը համաձայն հավելվածի:

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Խաչատրյան

Հավելված

Ազգային ժողովի ֆինանսավարկային և  
բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի  
20.10.2020թ. N ՖՎՈ-001-Լ որոշման

**ԿՈԼԵԿՏԻՎ ՀԱՆՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ**

2020թ. սեպտեմբերի 24-ին «Ոչ վարկային թալանին» նախաձեռնության կոլեկտիվ հանրագրով Ազգային ժողով ներկայացված առաջարկների (պահանջների) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

«Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հանրագիրը ներկայացվում է այն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց, որոնց իրավասություններին վերաբերում են հանրագրով առաջադրված հարցերը: «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 123.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրագրերն Ազգային ժողով կարող են ներկայացվել միայն Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ:

Վերը նշված կոլեկտիվ հանրագրով Ազգային ժողով ներկայացվել է վեց առաջարկ (պահանջ), որոնց թվում կան այնպիսիք, որոնք չեն վերաբերում Ազգային ժողովի իրավասությանը:

Մասնավորապես.

1) 1-ին և 6-րդ առաջարկները վարկային արձակուրդներ տրամադրելու մասին են, որոնք չեն վերաբերում Ազգային ժողովի իրավասությանը, քանի որ գտնվում են մասնավոր քաղաքացիաիրավական, պայմանագրային դաշտում: Այդուհանդերձ, հաշվի առնելով հարցի հանրային կարևորությունը արտակարգ և ռազմական դրությամբ պայմանավորված տնտեսական իրողությունների պայմաններում, այն կարող է քննարկման առարկա դառնալ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում՝ Կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների մասնակցությամբ: Նպատակահարմար է գտնել վարկառուների առանձին թիրախային խմբերին աջակցելու ուղիները՝ հաշվի առնելով ինչպես սպառողների և բիզնեսի շահերը, այնպես էլ ավանդատուների շահերը և ֆինանսական կայունության ապահովման անհրաժեշտությունը.

2) 4-րդ առաջարկը՝ այն բանկերին և վարկային կազմակերպություններին լիցենզիայից զրկելու վերաբերյալ է, որոնք արտակարգ դրության ժամանակ ճնշումներ են գործադրել ՀՀ քաղաքացիների վրա:

Ակնայտ է, որ հարցը չի վերաբերում Ազգային ժողովի իրավասությանը: ՀՀ-ում ֆինանսական ոլորտը կարգավորող, վերահսկող, օրենքով սահմանված կարգով համապատասխան լիցենզիաներ տրամադրող մարմինը ՀՀ կենտրոնական բանկն է: Իսկ ֆինանսական կազմակերպությունների լիցենզիաներն ուժը կորցրած կարող են ճանաչվել ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանված դեպքերում և կարգով.

3) 2-րդ առաջարկը վերաբերում է վարկային բյուրոյի համակարգի ամբողջությամբ թարմացմանը (վարկային համաներմանը), որի առնչությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը.

Հայաստանի Հանրապետությունում վարկային բյուրոների գործունեությունը կարգավորվում է «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի համաձայն՝ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ վարկային բյուրոյի հիմնական նպատակն է հավաքագրել տեղեկատվություն՝ սուբյեկտի պարտավորությունների կատարման վարքագծի վերաբերյալ և ֆինանսական կազմակերպություններին հնարավորություն տալ տեղեկանալու իրենց հնարավոր կամ գործող հաճախորդների այլ պարտավորությունների առկայության և դրանց

կատարման ընթացքի վերաբերյալ: Նշված տեղեկատվությունը ֆինանսական կազմակերպությունների համար հիմք է հանդիսանում անձի վարկային ռիսկը գնահատելու առումով և կարևորվում է հաճախորդի հետ ֆինանսական հարաբերությունների մեջ մտնելու տեսանկյունից:

Հարկ է նշել, որ վարկային բյուրոյի տեղեկատվության առկայությունը նպաստում է վարկավորման որոշումների կայացման ժամանակի ու ծախսերի կրճատմանը, վերջին հաշվով հանգեցնելով վարկերի հասանելիության աճին: Եթե վարկային բյուրոյի «համակարգի ամբողջությամբ թարմացում կամ վարկային համաներում» ասելով, նկատի ունեք հավաքագրված այդ տեղեկությունների բազայի վերացում կամ վարկատու կազմակերպություններին դրանց չտրամադրում, ապա, դեռ մի կողմ դնելով այն հանգամանքը, որ դա առաջին հերթին կհակասի վարկային բյուրոյի ստեղծման նպատակներին, պետք է հասկանալ, թե դրանից ի՞նչ կշահի սպառողը: Ակնհայտ է, որ արդեն իսկ վերցված վարկի սպասարկմանը այն որևէ կերպ չի աջակցի: Եթե համարում ենք, որ դա կնպաստի սպառողի համար վարկերի հասանելիության աճին, ապա հարկ է նշել, որ վարկային բյուրոյի կամ վերջինիս տեղեկատվության բացակայության պարագայում բանկերը հակված կլինեն վարկավորել առավելապես գրավով և միայն բարձր վարկունակություն (եկամուտներ) ունեցող հաճախորդներին: Հետևաբար, պետք չէ ակնկալել, որ դրա արդյունքում կաճի վարկերի հասանելիությունը: Մյուս հարցը վերաբերում է նրան, թե ո՞ր վարկառուների վերաբերյալ է առաջարկվում թարմացնել տեղեկատվությունը: Եթե բոլոր վարկառուների, ապա անհասկանալի է, թե արդյոք ի՞նչ է շահելու դրանից կամ համաձայն կլինի՞ բարվոք վարկային պատմություն ունեցող սպառողը, և արդյո՞ք առհասարակ շահելու է ոչ բարվոք վարկային պատմություն ունեցող սպառողը:

Վերոհիշյալից ելնելով՝ հասկանալի է, որ խնդիրը միանշանակ չէ, ուստի ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը իր պատրաստակամությունն է հայտնում ապագայում ևս անհրաժեշտության դեպքում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ շարունակել հարցի բազմակողմանի քննարկումը՝ ճիշտ և բալանսավորված լուծումներ գտնելու նպատակով:

4) հանրագրի 3-րդ և 5-րդ առաջարկությունները վերաբերում են վարկերի փաստացի տոկոսադրույքի վերին շեմ սահմանելուն, որի առնչությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը.

Ինչպես բոլոր ապրանքների և ծառայությունների գները, այնպես էլ վարկերի տոկոսադրույքները, պետք է ձևավորվեն ազատ մրցակցային միջավայրում՝ շուկայում առաջարկի և պահանջարկի հիման վրա: Ակնհայտ է, որ բանկերը և վարկային կազմակերպությունները փաստացի տոկոսադրույքը հաշվարկելիս՝ հաշվի են առնում վարկի տրամադրման գծով կատարվող ծախսերը (ֆինանսական ռեսուրսի ներգրավման ծախսերը, գործառնական ծախսերը, վարկային ռիսկը, արտարժույթային ռիսկը, չաշխատող վարկերի ծավալը և այլն): Հետևաբար ազատ մրցակցության պայմաններում տոկոսադրույքների նվազմանը կարող են նպաստել վերը նշված ռիսկերի և ծախսերի կրճատումը: Ներկայումս ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից

տրամադրվող վարկերի անվանական տոկոսադրույքը չի գերազանցում 24%-ը, իսկ 2019թ. արդյունքներով՝ բանկային համակարգի ROE-ն կազմել է 7.9%:

Արդյո՞ք վերը նշվածը նշանակում է, որ պետությունն այստեղ անելիք չունի և որ մեր ֆինանսական շուկայում ամեն ինչ կարգին է, որ ֆինանսական կազմակերպությունները չեն դրսևորում անբարեխիղճ վարքագիծ, չեն չարաշահում սպառողի ֆինանսական և իրավական գիտելիքների պակասը, չեն ոտնահարում սպառողի շահերը: Ամենևին ոչ:

Կենտրոնական բանկը պարտավոր է մշտապես հետևել և կարգավորել ֆինանսական շուկան, ապահովել տոկոսադրույքների ձևավորման առողջ մրցակցային միջավայրը, սպառողների (վարկառուների) շահերի պաշտպանվածությունը, նպաստել ֆինանսական գրագիտության հետևողական բարձրացմանը, վարկառուների իրազեկվածության և գիտակցված, պատասխանատու վարքագծի դրսևորմանը: Ինչպես գիտեք, «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանվել է պարտադիր կերպով փաստացի տոկոսադրույքը հրապարակելու և սպառողին բացահայտելու պահանջ՝ թե պայմանագրերում և թե գովազդներում կամ օֆերտաներում:

Այդուհանդերձ պետք է նկատի ունենալ, որ փաստացի տոկոսադրույքի ձևավորման ոչ շուկայական մեխանիզմների, առաջարկվող հարկադիր սահմանափակման պրակտիկան իր մեջ պարունակում է ֆինանսական միջոցների հասանելիության կտրուկ նվազման ռիսկեր: Վարկերի փաստացի տոկոսադրույքի 24%, առավել ևս 10% վերին շեմ սահմանելու դեպքում, օրինակ՝ փոքրածավալ կարճաժամկետ առանձին վարկեր պարզապես կարող են չտրամադրվել, որովհետև դրանց գծով գործառնական ծախսերը կլինեն ավելի բարձր, քան ակնկալվող եկամուտը: Արդյո՞ք դա է մեր նպատակը և արդյո՞ք դրանից կշահի սպառողը: Կարծում ենք, որ ոչ: Սա այն դեպքերից է, որ պետք է զգույշ լինել, որ «հոնքը շինելու տեղը աչքն էլ չհանենք»:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դժբախտաբար գործնականում դեռ չեն բացառվում առանձին ֆինանսական կազմակերպությունների կողմից սպառողների ֆինանսական և իրավական գիտելիքների պակասը չարաշահելու, անբարեխիղճ վարքագիծ դրսևորելու դեպքերը, ուստի ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը, ինչպես և նախորդ հարցի դեպքում, իր պատրաստակամությունն է հայտնում ապագայում ևս անհրաժեշտության դեպքում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ շարունակել հարցի բազմակողմանի քննարկումը՝ ճիշտ և բալանսավորված լուծումներ գտնելու նպատակով: